

ՄԻԱՅՐ Վ. ՎՆՈՒԿՈՎ



ՀՐԵՍԱՆԻ

Թարգմ. Առաջ.՝ 2-րդ հրատարակությանից

ԽԱՀԱՀԱ

1938

ՏԵՐԵՎԱՆ

358

Լ. 74


ՄԱՅՈՐ Վ. ՎՆՈՒԿՈՎ

358
4-74

5

ՀՐԵՏԱՆԻ

Թարգմ. ռուս. 2-րդ հրատարակությունից



12 AUG 2013

42.518


1 MAR 2010

Մայոր ՎԱԼՅՈՒՄԻՐ ՊԵՏՐՈՎԻՉ ՎՆՈՒԿՈՎ; ՀՐԵՍԱՆԻ:

Գրքույկը ծանոթացնում է հրետանու մալրտական աշխատանքին, հրետանական հրանոթի կազմությանը և զանազան արկերի գործողությանը: Գրքույկում պատմվում է այն մասին, թե ինչպիսի ողնություն կարող է ցույց տալ հրետանին իր զորքերին, ինչպես կարող են զորքերն ողնել իրենց հրետանուն, ինչնի և զորքերին սպառնում հակառակորդի հրետանին և ինչպես պետք է ծածկվել կամ պաշտպանվել հրետանու կրակից:



3147
30



ԻՆՉ Ե ԱՆՈՒՄ ՀՐԵՏԱՆԻՆ ՄԱՐՏՈՒՄ

(Հրետանու խնդիրները)

Հրետանին հանդիսանում է զորքերի գլխավոր տեռ սականերից մեկը: Նրա հիմնական ուժը նրա կրակի մեջ է: Հրետանին զինված և հուժկու մեքենաներով՝ հրետանական հրանոթներով, վորոնք նետում են 500 զբամից մինչև մեկ և կես տոնն (90 վութ) քաշ ունեցող արկեր՝ հրաձգային վորոնք այլ զենքի հրաձըդության հեռահասությունից անհամեմատ ավելի մեծ հեռավորությունների վրա: Խոկ մի քանի առանձնապես հուժկու հրանոթներ կրակում են հարյուրավոր կիլոգրամ քաշ ունեցող արկերով ավելի քան 100 կիլոմետր հեռավորության վրա:

Հրետանու արկերն ավերիչ մեծ ուժ ունեն: Նրանց ոգնությամբ ավերում են խրամատներ, ապառտարաններ և հակառակորդի պաշտպանական այլ կառուցվածքներ: Արկերը հարվածում են հակառակորդի մարտիկներին, շարքից հանում են նրա գնդացրերը, հրետանական հրանոթները, տանկերը և մալրտական

այլ մեքենաները: Պարզ է, վոր հրետանին ճիշտ ոգտաւողքման դեպքում կարող է մեծ ոգնություն ցույց տալ իր զորքերին:

Առանց հրետանու դժվար է հաջողության ձեռք բերել մարտաւմ:

Բազմաթիվ որինակներ կարելի յե գոտնել 1918-1921 թ. թ. մեր քաղաքացիական պատերազմում, վորոնք ցույց են տալիս հրետանու կարևոր դերը մարտում:

1920 թվի հուլիսի 4-ին Կարմիր բանակի 60-րդ դիվիզիայի զորամասերը համառ մարտ ելին մղում սպիտակ լեների ու պետլուրականների դեմ ժմերին կա—բարի տակ:

Այդ որը լեներն առավոտից հակահարձակման անցան և սկսեցին արագ նեղել մեր հետևակին: Կարմիր հրետանին դիմավորեց հարձակվող մասերին դիպուկ սպանիչ կրակով: Հակառակորդը չդիմացավ ու խուճապային փախուստի դիմեց, թողնելով շատ վիրավորներ ու սպանվածներ: Այն ժամանակ մեր հետևակին ինքն անցավ հարձակման և համարյա առանց կորուստների զրավեց մի շարք զյուղեր: Այդ հարձակմանը նույնպես հմտությամբ ոգնեց մեր հրետանին: Նա կրակի տակ եր պահում սպիտակ լեների մարտկոցները, հսարավորություն չտալով նրանց հարվածելու մեր զորքերին:

Յերեկոյան դեմ սպիտակ լեներին մոտեցան պետլուրականների զորամասերը, և նրանք կրկին փորձեցին հակահարձակման անցնել, վորպեսի մեր հետևակին դուրս վանեն առավոտյան զրաված զյուղերից: Բայց այստեղ նույնպես մեր հրետանին կարողացավ իր մեջ մարտի մասնի համաձայն և, ոգնելով միմյանց, կատարում են զորական միավորության միասնական մարտական խնդիրը:

Հասցնել այնպիսի կորուստներ, վոր նա չդիմացավ և ակաց նահանջել ամբողջ ճակատով: Հուլիսի 4-ի մարտի հետևանքով 60-րդ դիվիզիան համարյա առանց կորուստների, ծախսելով միայն մի քանի հարյուր արկ, կարողացավ կոտրել հակառակորդի դիմադրությունը և ստիպեց նրան նահանջել:

1914—1918 թ. թ. համաշխարհային պատերազմը և մեր քաղաքացիական պատերազմը ցույց տվին, թե ինչ հսկայական նշանակություն ունի հրետանին: Հրետանու գերը ժամանակակից մարտում չափազանց մեծ և շարունակում ե աճել: Զարթերի յարախանչյալ տեսակի ամեն մի մարտիկ պես և պարզուց ձևով գիտենա, թե ի՞նչ սպառյան կարող ե նրան ցույց տալ իր հրետանին, թե ինչպես նա ինքը պես և սպառյան իրեն հակառակորդի հրետանին և ինչպես պես և ծածկվել կամ պատասխանվել նրա կրակից:

Մարտում հաջողաւրյունը կախված է զարթերի բարոր տեսակների համերաշխ, համաձայնեցված աշխատանքից: Հետևակը, հեծելազորը, հրետանին, ավառզրահատանկային զորքերը, ավիացիան իրենց մարտական խնդիրները կատարում են, սերտ համազործակցություն ունենալով միմյանց հետ: Երանք զործում են մարտի ընդհանուր սլամնի համաձայն և, ոգնելով միմյանց, կատարում են զորական միավորության միասնական մարտական խնդիրը:

Հրետանու մարտական աշխատանքն անբաժանելի յե զարթերի մյուս տեսակների—հետևակի, հեծելազորի ու տանկերի—մարտական աշխատանքից: Այդ պատճառով ներկայումս հրետանին մտնում է բոլոր ընդհանուր-

զորական միավորությունների ու զորամասերի կազմի մեջ:

Հրետանու կրակն իր հզորությամբ մեծ չափով գերազանցում է զարթերի բալոր վերերկրյա տեսակների կրակից: Այդ պատճառով հրետանու հիմնական խնդիրն են հարվածել այն բազմազան հօտենիները, վարոնի չեն կարող հաջողաբերյամբ հարվածվել նրածգային զենքի կրակով: Այդպիսի նշաններ մարտում չափազանց շատ կպատահեն: Հրետանին դրանցից շարունակ ընտրում են այն նշանները, վորոնք խանդարում են իր հետևակին (հեծելազորին, տանկերին) առաջ շարժվել հարձակման ժամանակ կամ սպառնում են նրան պաշտպանության ժամանակ:

Յերբում հրետանին կպահպանի զորքերին թշնամու սավառնակների հարձակումից և կոգնի յետ մղելու հակառակորդի տանկերի ու զըահավտոմոբիլների հանկարծակի գրոնը:

Հարձակման ժամանակ, յերբ հետևակին չեն ոգնում տանկերը, հրետանին իր կրակը կուզդի առաջին հերթին արինսական խոչընդուների դեմ (լարափակոցներ, արգելանտառներ), վորպեսզի այդ խոչընդուների մեջ անցքեր բանա իր հետևակի համար: Այնուհետև հրետանին կծնչի, այսինքն՝ կստիպի լսել, հակառակորդի գնդացրերն ու նրա հրետանական հրանորները, վորպեսզի հետևակը կարողանա սակավ կորուսներով մոտենի հակառակորդին: Միևնույն ժամանակ հրետանին կհարվածի վոչ միայն բաց, այլև ծածկված նշանները (խրամատներում, ձորերում, բլրակների յետևում):

Յերբ հակառակորդն ամրացել եւ ու նստել ամուր

ապաստարաններում, հրետանին կավերի նրա խրամատներն ու ապաստարանները:

Հակառակորդը միշտ ել կարող եւ ունենալ թիկունքում ծածկված պահեստի թարմ զորամասեր (ոժանգակներ—ուղերձներ): Հրետանին, ոգտվելով իր հեռահարությունից, հարկավոր մոմենտին կցը այդ զորամասերին, կամ համենայն գեպս կխանգարի նրանց զրոհնելու առաջ ընթացող հետևակին:

Հատուկ հրետանական հրանոթները հարձակողական մարտում նույնպես կպահպանեն զորքերին ողից կատարած հարձակումից ու գիտողությունից, այսինքն՝ դիպուկ կրակով կդիմավորեն զորքերի դասավորության մեջ ներխուժած թշնամու յուրաքանչյուր սավառնակին:

Յերբ հարձակման ժամանակ բավականաչափ տանկեր կան, հրետանու փոխարեն նրանք անցքեր կրանան խոչընդուների մեջ, վորովհետև այդ նրանք ավելի հեշտությամբ և ավելի խրագ կանեն: Տանկերը կողնեն նույնպես ձնշելու հակառակորդի հետևակի և մասսմբ հրետանու կրակային միջցցները (գնդացրեր ու հրանոթներ): Այդ գեպքում հրետանին ամենից առաջ կհարձակի տանկերի զլիսավոր թշնամու, այն եւ հակառակորդի հրետանու վրա, մանավանդ հակառանկային հրանոթների վրա: Այնուհետև նա կոզնի տանկերին հաղթահարելու զանազան խոչընդուները, ձնշելով հակառակորդի այն հրանոթներն ու գնդացրերը, վորոնք իրենց կրակով պաշտպանում են այդ խոչընդուները: Հրետանին առանց ոգնության չի թողնի նույնպես իր հետևակին: Նա տանկերի հետ միասին համերաշխ ձեռվ կաշխատի հետևակի համար ձանա-

պարհ բանաւ դեպի առաջ, դեպի հակառակորդի պաշտապանական շերտի խորքը:

Իսկ յերբ հետևակը ստիպված կլինի պատվանվել, հրետանին դործ կդնի բոլոր միջոցները պահպանելու համար նրան գրոհող հակառակորդի զորքերից: Այսուեղ հրետանու ամենապլիսավոր նշանները կլինեն հակառակորդի տանկերը, ավլացիան, հրետանին և, իհարկե, նրա հետևակի գրոհող մասերը:

Պարզ է, վոր հրետանին միայնակ, առանց զորքերի այլ տեսակների, չի կարող վճռել մարտի բախտը: Իր կրակով նա կարող է հարվածել բազմապիսի նշաններ, բայց նա միջոցներ չունի ամրացնելու, իր ձեռքում պահելու տեղանքը: Բացի գրանից, հրետանական հրանոթները հրաձգության համար պետք է պատրաստվեն, իսկ ժամանակակից հրանոթների մեծամասնությունը յերթական գրությունից մարտական դրության անցնելու համար պահանջում էն մի քանի բռպի, ուստի յերթում հանկարծակի հարձակման դեպքում այդպիսի հրանոթները գտնվում էն անպաշտապան գրության մեջ: Միայն նորագույն ինքնընթաց հրանոթները (վորոնք ասես թե մի ամբողջություն են կազմում տրակտորի հետ) կարող են կրակել շարժման ժամանակ, առանց կանգ առնելու:

Այս բոլորը մի ավելորդ անգամ հաստատում են, վոր մարտում հայրանակը հնարավոր և միայն զորքերի բոլոր տեսակների մեր համագործակցությամբ:

Հ Ա Ր Յ Ե

1. Ինչո՞վ եռժեղ հրետանին:
2. Ինչպիսի՞ ողնություն կարող ե ցույց տալ հրետանին զորքերի մյուս տեսակներին յերթում:

3. Ի՞նչ նշաններ ե գնդակոծում հրետանին առաջին հերթին հարձակման ժամանակ:

4. Ո՞վ պետք ե հետևակի համար անցքեր բանակառություններում:


5. Ի՞նչ և անում հրետանին պաշտպանության ժամանակ:

6. Ինչո՞ւ միայնակ հրետանին չի կարող հաղթանակ ձեռք բերել թշնամու գեմ:

7. Կրակի արդյոք հրետանին առանձին մարտիկի դեմ, յերբ վերջինս առանց ծածկվելու անցնում է խրամատի յերկարությամբ:

8. Կարելի՞ յե արդյոք հրետանուց պահանջել, վոր նա կրակ բանակառությունը գնդացըլ գեմ, վորը ծածկված է ձորում և խանգարում է այդ տեղամասում մեր հետևակի առաջիսաղացումը:

Շրապնելը (նկար 1) այնպիսի արկ է, վորը լիքն է գնդաձև գնդակներով։ Վորպեսզի շրապնելի պայթյունը տեղի ունենա ողում՝ նշանի վրա շրապնելի մարմնին (կորպուսին) պառատակված ե հեռակալորյան փողակ (նկար 1): Փողակն այնպիս ե պատրաստված, վոր նրա շարժական ողերից մեկը հաստելով




Նկ. 1.

Շրապնել։ Զախ կողմում՝ թռիչքի ժամանակ, աջ կողմում՝ սկավառակներ, հարկավորվեցին հատուկ գնդակներ, զրահաճար, ծրագծող (թռիչքի ժամանակ լուսավոր կամ ծխային հետք թողնող), հրդեհիչ և փորձնահրաժարագային։

Պարզ է, վոր հրետանին, կովելով բաղմազան նշանների գեմ, առավել ևս չի կարող բավարարվել միայն մի տեսակ արկով։ Սյդ պատճառով հրետանին ունի մի քանի տարբեր արկեր։

Կենդանի նշաններ, այսինքն՝ հետևակի և հեծելազորի մարտիկներին հաջողությամբ հարվածելու համար, անհրաժեշտ ե այնպիսի արկ, վորը պայթելիս ցրի մեծ թվով գնդակներ կամ բեկորներ (կոտրներ): Նման արկերից մեկն ե հանդիսանում շրապնելը։


(գնելով) համապատասխան խաղի վրա, կարելի յեարկի պայթյունն առաջացնել անհրաժեշտ հեռավորության վրա։ Նույն այդ փողակն ավտոմատիկ ձևով արկի պայթյունն ե առաջացնում՝ արկը խոչընդուռի բաղկավելիս, յեթե դրանից առաջ նա չի պայթել ողում։ Յերբ շրապնելը պայթում ե ողում, գոյանում ե ծխց ամպ և լսվում ե վոչ ուժեղ ձայն։ Անհրաժեշտ բարձգ բության վրա արկի պայթման ժամանակ շրապնելիս գուրս թռչող գնդակները թափիլում են զգալի չափով մեծ տարածության վրա (նկար 2 և 3) և կարող են



Նկ. 2.

Շրապնելի դործողությունը՝ ողում հաջող ձեռվ պայթելու դեպքում: Ինչպես են թռչում շրապնելի դնդակները և ինչն և հուզուալի ծածկաբան ծառայում նրանց դեմ

միանգամից հարվածել մեծ թվով մարտիկների, յերբ վերջիններս դասավորված են բաց (առանց պաշտպանության) և կուտակված են փոքրիկ տեղամասում:



Նկ. 3.

Շրապնելի դործողությունը՝ ողում հաջող ձեռվ պայթելու դեպքում: Այն տարածությունը, որոր ծածկվում և շրապնելի դործոն դնդակներով

Շրապնելներով ոմբակոծումը զորքերի համար առանձնապես վտանգավոր է յերթում, յերբ նրանք շարժվում են խիս զորայուներով: Այդ պատճառով յերբ անհրաժեշտ է շարժվել հակառակորդի հրետանու կողմից ոմբակոծվող բաց տեղանքով, զորքերը մասնավում են, այսինքն՝ բացազատվում են առանձին փոքր խմբակների (գումարտակը—վաշտ առ վաշտ, վաշտը—դասակ առ դասակ, դասակը—ջոկ առ ջոկ): Նման գեպքում խմբակն աշխատում է շարժվել մյուս խմբակից առավագն 200 մետր հեռակայության վրա և առ նվազն 20 մետր միջանցներով (նկար 3), այսինքն՝ այնպես, վոր ըրապնելի մեկ պայտիունը չկարողանա միանգամից հարվածել յերկու հարկեան կամ միմյանց յետելից քայլող խմբակներ (որինակ՝ միանգամից յերկու հարկեան դասակներ):


Ահա թե ինչ պատահեց մի անգամ համաշխարհային պատերազմում, յերբ հետախուզությունն աչքից թողել եր հակառակորդին: Մի գերմանական հեծյալ գունդ զորայունով շարժվում եր բաց ճանապարհով: Գնդից գեպի առաջ ուղարկած հետախուզությունը չհայտաբերեց հակառակորդին: Մինչդեռ ֆրանսիացիները հեռվից նկատել եյին գերմանական գնդին: Նրանք բաց թողեցին հետախուզությունը, և յերբ զուրասյունը մոտեցավ 5 կիլոմետրի չափ, հանկարծ նրա գեմ կրակ բացեցին շրապնելով: Զանցավ 5 բոպե, ինչ զորայունի վրա պայտած 16 շրապնելը շարքից հանեց 700 հոգի: Գունդը համարյա ամբողջովին վոչընչացվեց:

Շրապնելն ավելի ևս մեծ հարված և հասցնում կենդանի նշաններին, յերբ նա հաստված է «կարտեչի»

վրա»: Այս դեպքում շրապնելը պայթում է հրանոթից գուրս թռչելուց անմիջապես հետո, զործոն գնդակներով ծածկելով զգալի չափով մեծ տարածություն (նկար 4):

Հրետանին կարտեզով կրակում է միայն այն դեպքերում, յերբ հակառակորդը գտնվում է նրանից շատ մոտիկ, որինակ՝ յերև հետեւակը կամ հեծելազորն անմիջականութեն գրոհում է հրանոթները:

Քաղաքացիական պատերազմում—հարավային ճակատում—մեր մի մարտկոցը գասավորվել եր դիրքում գյուղի մոտ՝ փոքրիկ անտառակի յետեւում: Հանկարծ միանգամայն անսպասելի կերպով անտառակից դուրս յեկալ մի սպիտակ հարյուրակի, վորը ճեղքել՝ անցել եր ճակատից և հարձակվեց ուղիղ մարտկոցի վրա: Անտառակից մինչև մարտկոցը մոտ 1 կիլոմետր եր: Յեթե հրետափորները շփոթվելին, մարտկոցը կղրավվեր սպիտակների կողմից: Բայց հրետափորներն արագ լցրեցին հրանոթը և սպիտակներին դիմավորեցին «կարտեչի» շրապնելով (հրանոթների մեծամասնության շրապնելային արկերը պահպանվում են միշտ «կարտեչի վրա» հաստված, այնպես վոր կրակելու համար բավական է միայն այդ արկերը դնել հրանոթի մեջ, ծածկել փականը և քաշել հրահանը): Կարտեչը բառի բուն իմաստով հնձեց սպիտակներին: Միքանի հաջող համազարկից հետո սպիտակ հարյուրակից մնաց մի քսան հոգի, վորոնք շրջեցին ձիերը և կրկին յետ փախան դեպի անտառակի: Բայց սրանց նույնպես չհաջողվեց փախչել, մարտկոցը նրանց յետեւից արձակեց մի քանի համազարկ և նրանք նույնական մնացին մարտի դաշտում:



Նկ. 4.

Շրապնելի գործողությունը «կարտեչի վրա» հաստված պայթելու դեպքում

Այս որինակը ցույց է տալիս, վոր հրետանական հրանոթները դիրքում շատ գեվար ե վերցնել, գրոհելով ճակատից: Մարտկոցը պետք է գրոհել հանկարծակի և միաժամանակ մի քանի կողմից կամ նախապես ճնշել այն իր հրետանու կրակով:

Հրետանական հրանոթների համար վտանգավոր թշնամի յեն հանդիսանում նույնպես տանկերն ու ավիացիան, վորոնց դեմ կարտեչն անզոր ե, և վորոնք միշտ ել կինտուեն իրենց մահացու թշնամուն—հրետանուն, վորպեսզի հարձակվին նրա վրա:

Շրապնելներն ողում պայթելիս (նկար 2) նրա գնդակները թռչում են դեպի առաջ և այդ պատճառով չեն կարող հարվածել մարտիկներին նեղ, խոտորնակի (ընդլայնակի) խրամներում, ծնկից ու կանգնած կրակելու խրամատներում և մինչև անզամ փոքրիկ պատի յետեւում: Միայն արկերն ուղղորդ ձևով նետող հրանոթների հրածգության դեպքում (նկար 2.1) շրապնելը վտանգավոր է նաև ծածկված զորքերի համար:

Բայց այս դեպքում նույնպես խրամատի առջևի պատին սեղմված մարտիկը չի հարվածվի շրապնելի գնդակներով:

Ընդհանրապես դժվար չե պաշտպանվնլ շրապնելի գնդակներից, վրորվետև նրանց ծակել-անցնելու ուժը մեծ չէ: Խրամատի վրայի յուրաքանչյուր շքարան (կօզիրեկ), յուրաքանչյուր քարե պարիսպ, ծառի բուն—այս բոլորը կարող են հուսալի պաշտպան ծառայել շրապնելի գնդակների դեմ: Այդ պատճառով հասկանալի յե, վոր զրահապատ մեքենաներին և պողպատե վահաններով պաշտպանված մարտիկներին (որինակ՝ հրետանական հրանոթների մոտ կրակային համրանքին) շրապնելը վոչ մի մաս չի հասցնի:


Սակայն կարող ե այսպիսի դեպք պատճառել, յերբ շրապնելը չափազանց վտանգավոր կլինի մինչև անգամ ծածկված զորքերի համար: Այդ այն դեպքում ե, յերբ հրաձգությունը վարում են վոչ թե ծածկարանի լայնությամբ, այլ նրա յերկարությամբ, կամ ինչպես ասում են՝ կողմանար կրակով: Այդ պատճառով զորքերը միշտ ել միջոցներ են ձեռք առնում շրապնելով թևից (կողքից) հարվածվելու դեմ: Այդ նպատակով դիտմամբ կորացնում են խրամատները, նրանց մեջ պատրաստում են խոտորնակ միջնորմներ (տրավերմներ), խրամատները ծածկում են շքարաններով, խրամուղիները պատրաստում են զիգզագներով և այլն:

Այսպիսով շրապնելն առանձնապես վտանգավոր է բաց (չպատշաճնված) կամ բույլ չտփով ծածկված մարտիկների համար:

Ն Ռ Ն Ա Կ

Նոնակը (նկար 5) դնդակների փոխարեն լցված ե խիստ պայթուցիկ նյութով: Վորպեսզի նոնակը պայթի նշանի մոտ, նրա մեջ սովորաբար պտուտակվում ե վոչ թե հեռակայության փողակ, այլ պայթուցիչ:

Պայթուցիչն այնպիս ե կազմված, վոր նոնակը պայթում ե բաղկավելիս կամ միանդամելից (վայրկենա-



Նկ. 5

Նոնակ: Զախ կոզմում—թռչելիս աջ կողմում—պայթման մոմենտին, յերբ պայթուցիչը հաստիք է բեկորավոր դորձողության վրա

պես), առանց խորանալու խոչընդոտի մեջ, կամ փոքրիշատե խորանալով նրա մեջ: Այդ կախված ե պայթուցիչի հաստումից, վորը փոխվում է կրակողի ցանկությամբ: Նոնակը պայթելու միջոցին ստացվում ե պայթյունի չափազանց ուժեղ և խիստ ձայն և լովում ե դեպի կողմերն ու դեպի վեր թռչող բեկոր-


ների վոռնոց: Պայթյունի վայրում գոյանում և ծխի
խիտ, մութ ամպ:

Նոնակի բեկորներից վտանգավոր են միայն նրանք,
վորոնք թուզում են ցածրից՝ գետնի յերեսին (նկար 6):
Խոկ գեղի վեր թուզող բեկորներն, արագ կորցնելով
իրենց թոփչքի արագությունը և գետին ընկնելով,
այլևս չեն կարող շարքից հանել մարտիկին: Այդ
պատճառով կենդանի նշաններ հարվածելու համար
նոնակի պայթուցիչը դնում են բեկորավոր գործողու-
թյան վրա, վորով արկի պայթյունը տեղի յե ունե-
նում խոչընդունին բաղկալուց հետո վայրի նախալի:
Այս գեղպատճ նոնակը պայթելիս գետնի մեջ գոյա-
նում և մի փոքրիկ փոս (ձագար) ընդամենը 20—30
սանտիմետր խորությամբ (նկար 5):

Սովորաբար գտնում են, վոր արկն իր գարծան հար-
վածը հասցնում է պայթյունի կետի մոտ, վորի տա-
րածության վրա շարքից դուրս և գալիս բոլոր նշան-
ների առնվազն կեսը:

Նոնակի բեկորներով գործոն հարվածման տարա-
ծությունը համեմատաբար մեծ չե (նկար 7), մոտա-
վորապես 10 անգամ սովելի պակաս ե, քան թե շրապ-
նելի հարվածման նույնպիսի տարածությունը (համե-
մատեցեք 3 և 7 նկարները):


Այդ նոնակի գլխավոր պակասություններից մեկն
է: Բայց դրա փոխարեն նոնակը հարվածում է վոչ
միայն բաց, այլև ծածկված նշաններ (նկար 6) և
մինչև անգամ հակառակ լանջերի վրա գտնվող նշան-
ներ: Մինչդեռ շրապնելի գնդակները կարող են թուշել
միայն գեղի առաջ: Բացի դրանից, նոնակով անհա-
մեմատ ավելի հեշտ ե կրակել, քան թե շրապնելով.



Նկ. 5.

Պայթուցիչը բեկորավոր գործողության վրա հաստված նոնակի բեկորների ցըռւմը

շրապնելը պետք է պայթեցնել անպայման անհրաժեշտ
բարձրության վրա: Առանձնապես ձեռնոտու յե նոնա-
կով կրակել կենդանի նշանների դեմ մեծ հետավորու-
թյունների վրա: Այս գեղպատճ նոնակն ավելի մեծ
չափով և հարվածում, քան թե շրապնելը:




Նկ. 7.

Այն տարածությունների չափերը, վորոնց վրա զանազան նոնակ-
ների բեկորները գործոն հարված են հասցնում (սկարների տակ
ցույց և տրված նոնակների տրամաչափը մշտիմետրերով)

Նոնակի բեկորները, ինչպես և շրապնելի գնդակները ծակելանցնելու այնքան ել մեծ ուժ չունեն։ Նրանցից պաշտպանություն կարող են ծառայել հողի բարակ շերտը, խրամատի շքարանը և այլն։

Հասկանալի յե, վոր նոնակի բեկորները սարսափելի չեն նրանց համար, ովքեր գտնվում են խրամատներում, յեթե միայն նոնակը չի պայթում հենց իրամատի մեջ, վորը շատ սակավ գեղքերում և պատահում։ Այդ պատճառով մի քանի բանակներում բաց




Ն. 8.

Հեռակայական (բրիզանտական) նոնակի բեկորների ցըռումը ու ծածկված կենդանի նշաններ հարվածելու համար, բացի բեկորավոր պայթուցիչ ունեցող նոնակից, գործադրում են նույնպես նեռակայական (բրիզանտական)

նոնակի, վորը շրապնելի նման ունի հեռակայության փողակի և պայթում և ողում նշանի գլխավերելում (նկար 8 և 9)։


Նույն պայթյունի դեպքում նոնակի բեկորները թռչում են վոչ միայն դեպի առաջ, դեպի կողմերն ու դեպի յետ, այլև մասամբ դեպի ցած, ուստի նրանցից պաշտպանվելու համար անհրաժեշտ և ծածկաբան ունենալ նաև վերեկից, ինչպիսին ե, որինակ՝ խրամատի շքարանը։



Ն. 9.

Այն տարածությունը, վորի վրա 75 կամ 76 միլիմետրանոց հեռակայական (բրիզանտական) նոնակի բեկորները տալիս են ամենից գործոն հարվածում

Վերջապես՝ նոնակի պայթյունն ողում կարող ե առացվել նաև առանց հեռակայության փողակի, արկի հողից կատարած ընդուառմից (ոփկոշետից) հետո (նկար 10)։ Նոնակի այդպիսի ընդուառմը տեղի յե




Նկ. 10.

Ընդունումից (ռիկոշեալից) հետո պայմանակի բեկորների ցըռումը

ունենում, յերբ հրածգությունը կատարվում է պինդ գետնի վրա՝ հրանոթից վոչ ավելի քան 3—4 կիլոմետր հեռավորության վրա։ Այդ դեպքում արկի պայմուցիչը դնում էն նապաղած գարծողաւրյան վրա, այսինքն՝ այնպես, վոր պայմունը տեղի ունենա վոչ թե բաղախումից անմիջապես հետո, այլ մի վորոշ ժամանակ անց։ Ընդունումից հետո պայմանակը տալիս ե մոտավորապես բեկորների նույնալիսի հարվածում, ինչ ողում պայմենու դեպքում (նկար 11):

Բայց նոնակը ծառայում է վոչ միայն կենդանի նշաններ հարվածելու համար։ Վորովինետ նա լցված է խիստ պայմուցիկ նյութով, ուստի նրա ներգործությունը կարող է լինել ավերիչ, կամ, ինչպես ասում են՝ ֆուզասային, և այդ պատճառով հատկապես ավերման համար նշանակված նոնակը առաջ անվանում ելին ֆուզասային։ Վորով ամուր նշան, —որինակ՝ յերկաթաբետոնից պատրաստած կամ խորը հողի մեջ փո-

րած ապաստարան, — ավերելու համար հարկավոր է, վոր նոնակի պայմունը տեղի ունենա վոչ թե անմիջապես բաղաման ժամանակ, այլ խոչընդուռի մեջ խորանալուց հետո։ Դրա համար պայմուցիչը դնում են ֆուզասային գործողաւրյան վրա։



Նկ. 11.


Հ5 կամ 76 մմ. նոնակի բեկորներով գործոն հարվածման տարածությունը, յերբ նոնակը ուայթում է ողում ընդունումից հետո

Ֆուզասային գործողության վրա հաստված պայմուցիչով նոնակը պայմենական բարձրանում է սկ ծխի ու հողի սյուն (շատրվան), բեկորները թռչում են դիմավորապես դեղի վեր, իսկ պայմունի վայրում գոյանում ե համեմատաբար մեծ ձագար (նկար 12 և 13):

Ամենախոշոր ժամանակակից հրանոթները (40 սանտիմետրեց ավելի տրամաչափով) կրակում են այնպիսի ուժգնության արկերով, վոր նրանցից պաշտպանել չեն կարող գաշտային վոչ մի ամրություն, սա-

կայն դաշտային մարտում նրանք սակավ դեպքերում են մասնակցում:

Իսկ պաշտպանության մեջ զորական հրետանու արկերից պաշտպանելու համար կարելի յե յերկաթարեառնից պատրաստել միանգամայն հուսալի ապաստարաններ: Դրա հետ միասին, նշանն ավերելու կամ հարվածելու համար հարկավոր են նոնակը դիպղնել նշանին, իսկ այդ հեշտ խնդիր չե հրետանու համար,




Նկ. 12.

Պայթուցիչը փուգասային գործողության վրա հաստված նոնակի գործողությունը

մանավանդ, յերբ նշանը լավ ե բոլարկված, ծածկված ե հակառակորդի աչքից: Պատերազմում հաճախ պատահում են դեպքեր, յերբ հակառակորդը հարյուրավոր արկեր ե արձակում վորևե ապաստարանի կամ գնդացրային բնի դեմ, ձագարներով փորփում ե

ամբողջ տեղանքը նրա շուրջը, իսկ ապաստարանը մնում է միանգամայն անփառ և հարվածման յենթարկվում են միայն նրանք, ովքեր չեն կարողանում, ինչպես հարկն ե, պաշտպանվել բեկորներից:



Նկ. 13.

Միջին պնդության դետնի մեջ փուգասային պայթուցիչով տարբեր նոնակների պայթման ժամանակ ստացվող ձագարների չափերը: Ցուրաքանչյուր ձագարի տակ ցույց են տրված նրա չափերը մետրերով և ներքենում նոնակի տրամաչափը միլիմետրերով


Անմիջական դիպման դեպքում նոնակը վտանգավոր ե նաև բոլոր զրահապատ մեքենաների համար: Դիպչելով տանկին՝ նոնակը ծակում ե նրա զրահը և պայթելով տանկի ներսում, շարքից հանում ե և՛ մեքենան, և՛ անձնակազմին: Տանկը շարքից կարող է դուրս գալ նաև նրա տակ կամ նրա կողքին (1—2 մետրից վոչ հեռու) պայթած նոնակից: Այս դեպքում պայթյունի ուժից և բեկորներից յերբեմն կարատվում ե տանկի թրթուրը, ծակվում ե զրահը, վորը տանկի կողքերին ու հատակին համեմատաբար բարակ ե լինում և փշանում են նրա մեխանիզմները:

Փուգասային գործողության վրա հաստված պայթուցիչով նոնակը հարվածում ե կենդանի նշանները, թե պայթյունի զաղերով և թե բեկորներով, բայց միայն պայթյունի վայրին անմիջականորեն մոտիկ

շրջանում, վորովհետև այդ գեղքում բոլոր բեկորները կամ մտնում են հողի մեջ, կամ թռչում են գեղի վեր (նկար 12) և գետին են ընկնում կորցնելով իրենց ծակող ուժը: Այդ պատճառով գտնվելով նոնակների գնդակոծան տակ, հարկավոր ե պայթյունի մոմենտին պառկել, սեղմվելով հողին, իսկ պայթյունների ընդմիջումներին արագ վազեվազք կատարել և ծածկվել ձագարներում, խրամներում և այլն:


ՔԻՄԻԱԿԱՆ ԱԲԿԵՐ

Համաշխարհային պատերազմում կենդանի նշաններ հարվածելու համար լայն չափով գործադրվում ելին քիմիական արկեր (նկար 14 և 15): Բոռքմուազիայի կողմից գործադրուներն ու գաղութներում հեշտացնելու մասին արդարացումը կազմուած է այս կողմում:



Նկ. 14.

Քիմիական արկ (ամերիկական): Զսի կողմում – թուիչքի ժամանակ, աչ կողմում – պայթման մոմենտին



Նկ. 15.

Քեկորավոր – քիմիական արկ (գերմանական): Զսի կողմում – թուիչքի ժամանակ, աչ կողմում – պայթման մոմենտին:

Պակուսական ապատամ բությունները ճնշելու համար քիմիական ոռումքեր գործադրելը և մանավանդ ֆաշիստական իտալիայի կողմից չարեցատանի դեմ լայն չափով թռւնավորող նյութեր գործադրելը ցույց ետալիս, վոր կապիտալիստները գալիք պատերազմում, չնայած բոլոր գաշնագրերին ու համաձայնություններին, կողտավեն քիմիական արկերից:

Ցեթե արկը հարվածում ե միայն իր մեջ պարունակած բաւեավերող նյութերով (թվ), այդպիսի արկը կոչվում ե քիմիական: Իսկ յեթե, բացի թվ-ից, արկը հարվածում ե նաև նրա պայթման ժամանակ բոլոր կողմերը ցրվող բեկորներով, նա կոչվում ե բեկորավոր – քիմիական արկ: Քիմիական արկը (նկար 14) պայթում ե գետնին խուլ ձայն արձակելով (պայթյունը

թուլ և և այդ պատճառով բեկորներ չկան), և նրանից գուրս և նետվում թն, վորը կամ համարյա լիովին խառնվում և ողի հետ, զոյացնելով գաղային ամպ, կամ շաղ և գալիս տեղանքում յերկար ժամանակով վարակելով այն: Այսպիսի գեպքում վարակվում են բոլոր նրանք, ովքեր հակագաղ չունեն և ներշնչում են թունավորված ողը, ինչպես նաև նրանք, ում վրա ընկնում են մաշկա—պալարային ներգործության թն կաթիլներ:

Քիմիական արկը վտանգավոր և թն-ից չպաշտպանվածների համար պայթյունի մոմենտին, մոտավորապես 100 մետր հեռավորության վրա: Պայթյունից հետո գոյացած թն ամպը շարժվում և քամու ուղղությամբ, և յեթե քիմիական արկերը պայթում են իրար յետերից մեծ քանակությամբ (և հենց այդպես ել արձակելու յեն այդ արկերը), ապա թունավորումը կարող և տեղի ունենալ վոչ միայն պայթյունների վայրի մոտերքում, այլև գգալի չափով մեծ հեռավորության վրա:

Այդ պատճառով հենց վոր սկսվում և քիմիական արկերով ոմբակոծումը, տվյալ տեղամասում հայտրաբվում և քիմիական տագնապ, և մարտիկները հագնում են հակագաղերը, իսկ անհրաժեշտության դեպքում ձեռք են առնում նաև թն-ից պաշտպանվելու այլ միջոցառումները (որինակ՝ մաշկա-պալարային թն շաղ տալիս հագնում են թիկնոցները և այլն):

Բնօրսավար-քիմիական տրկը (նկար 15) պայթում և նույնակի ձայն արձակելով, ինչ նոնակը: Նա հարվածում և բեկորներով, այդ տեսակետից համարյա չտարբերվելով բեկորավոր պայթուցիչ ունեցող նոնա-

կից և, բացի դրանից, ստիպում և պայթյունի մոտերքում գտնվողներին հազնել հակագաղերը:


ՀԱՏՈՒԿ ԱՐԿԵՐ

Ճիշտանու հատուկ (ոժանդակ) արկերի գործողությունն ու նշանակություննը հասկանալի յե 16, 17:



Նկ. 16.

Ծխատու (ֆոսֆորայլն) արկի պայթյունը




Նկ. 17.

Զրահահամար արկ: Զախ կողմում—թուիչքի ժամանակ: Աջ կողմում—զրահը ծակելու մուենտին (պայթելուց առաջ)


18, 19 և 20-րդ նկարներից։ Այդ բոլոր արկերից
ներկայումս հատուկ նշանակություն են ստանում
ծխառու (Փոսֆորային) և գրանահար արկերը։

Ծխառու (Փոսֆորային) արկը (նկար 16) կազմված է
քիմիական արկի նման (նկար 14)։ Նրա պայթման
ժամանակ չորս կողմն են ցրվում այրվող Փոսֆորի
(լուսածնի) մասնիկներ և գոյացնում սպիտակ ծխի
մեծ, խիտ, անթափանց ամպ։ Ընկնելով մաշկի վրա՝
վառվող Փոսֆորի մասնիկներն առաջացնում են այր-
վածքներ։ Բայց ծխառու արկերի հիմնական նշանա-
կումն ե հակառակորդի կուրացումը։ Բավական քանա-
կությամբ ծխառու արկեր արձակելով թույլ քամու



Նկ. 18.

Հրդեհի արկ Զափի կողմում—թռիչ-
քի ժամանակ, աջ կողմում—պայթման
մօմենտին։ Արկը կազմված է շրապնե-
լի նման, բայց գնդաների փոխարեն։
Նրա մեջ գանգում են պյուրալառ տերմիտի սեղմենտներ։ Տեր-
միտն ալյումինի փոշու խառնուրդն է յերկաթի կոփափլանքնե-
րի հետ։ Նրա այրման ժամանակ առաջանում է չափազանց արձ-
քի հերմություն (2000—3000 աստիճան)։




Նկ. 19.

Լուսառու արկ Զափի կողմում—արկի կազմությունը, աջ կող-
մում—կիսագլաններից մեկը լուսառու բաղադրությամբ պարա-
ցուառվ գանգազ ընկներու մուռնութիւն։ Արկը կազմված է շրապնե-
լի նման։ Պայթման ժամանակ կրանից գուրս են թռչում այրվող
կիսագլաններ լուսառու բաղադրությամբ, վորոնք ամբացված ևն
պարացուառներին և այդ պարագառուառներով նրանք ցած են իջնում

գեղգըռում նրանց ողնությամբ կարելի յե ծխով պա-
տել հրետանու գիտակետերը, գնդացրային բները և
հրաձիգների առանձին խմբերը։ Վոչինչ չտեսնելով ծխի
միջից, հակառակորդի հրետափորները գնդացրողներն
ու հրաձիգները չեն կարող գիտել և դիպուկ կրակ
վարել։

Զրահահար արկերը (նկար 17) նշանակված են հատ-



Նկ. 20.

Աղիտացիոն արկ, Զախի կողմում՝ թոփչքի ժամանակ, աջ կողամում՝ պալթման մոմենտին; Արկի մեջ լցվում է աղիտացիոն գրականություն (թոռոցիկներ), վորը ցըլում է պայթման ժամանակ

կապես տանկերի վրա կրակելու համար; Նրանք նման են սովորական նոնակներին, բայց զբանց պատերն ավելի հաստ են և ամուր: Առանձնապես ամուր է պատրաստվում նրանց զլիսիկը: Յերբեմն զրահահար արկի զլիսիկը փոքր ինչ կտրված է լինում, վորպեսզի արկը շեղակի հարվածի դեպքում չսահի զրահի յերեսով (ընդուառություն չտա): Իսկ վորպեսզի արկը թոփչքի ժամանակ պակաս դիմադրություն գտնի ողի կողմից, կտրած զլիսիկի վրայից հազցնում են բարակ, մեջը դատարկ (ձգաբանական) ծայրապանակ:

Վերջին ժամանակներս հանդես են յեկել ծրագծող և գրահանար-ծրագծող արկեր, այսինքն՝ այնպիսի արկեր, վորոնք թոփչքի ժամանակ լուսավորում են կամ թողնում են ծխային հետք: Այդպիսի հետքն ոգնում է արագ և դիպուկ նշանադրել արկերը շարժվող նշանին (տանկ, սավառնակ):

Հ Ա Բ Յ Ե Ր

1. Ինչո՞ւ հրետանին չի կարող բավարարվել միայն վորնե մեկ տեսակ արկով:

2. Ինչպիսի՞ արկեր են ծառայում կենդանի նշաններ հարվածելու համար:

3. Ինչպի՞ս կարելի յե պաշտպանվել շրապնելի գնդակներից,

4. Ինչպի՞ս դեպքերում կարող են զորքերն ընկնել կարտեչի տակ:

5. Պատճառքո՞ր են արդյոք մարտիկներից 100 մետր հեռագործական պայթած նոնակի բեկորները:

6. Կաղազապանի՞ արդյոք մարտիկներին առանց ըքարանի խրամատը ողում հաջող ձեռվ պայթած նոնակի բեկորներից:

7. Ինչպի՞ս նշանների դեմ են կրակում պայթուցիչը ֆուդասակին գործողության վրա հաստիք նոնակով:

8. Ինչպի՞ս կարելի յե ամենից լավ պաշտպանվել՝ պայթուցիչը ֆուդասային գործողության վրա հաստիք նոնակի բեկորներից:

9. Ինչպի՞ս կարելի յե տարբերել քիմիական արկի պայթյունը մյուս արկերի պայթյունից:

10. Ինչն է աղատպանվում մարտիկները քիմիական արկերի հարվածումից:

11. Ինչ համար են ծառայում հրդեհիչ արկերը:

12. Ինչ նպատակով և ինչ նշանների յե հրետանին կրակում ծխառու արկեռում:

13. Ինչո՞վ ե տարբերվում զրահահար արկը նոնակից:

14. Ինչո՞վ են լցնում պիտացիոն արկը:

ԻՆՉՊԻՍԻ ՀՐԱՆՈԹՆԵՐ ԵՆ ՀԱՐԿԱՎՈՐ ՀՐԵՏԱՆՈՒՆ
(Հրանորենի տիպարները յեզ իրենանու տեսակները)

ԹՆԴԱՆՈԹ, ՀՈԲԻՑ ՅԵՎ, ՀՐԱՄԱՆԴ


Հրետանուն վիճակվում և կրվելու ամենաբազմազան նշանների դեմ—մոտիկ ու հեռավոր, բաց ու ծածկված, շարժվող ու անշարժ—նշանների դեմ։ Իրենց բնույթով և դրությամբ տարբեր նշանները պահանջում են վոչ միայն տարբեր արկեր, այլև իրենց հատկություններով տարբեր հրանոթներ։

Քննենք թեկուզ միմյանցից այնքան խիստ տարբերվող նշաններ, ինչպիսիք են տանկը և ամուր ապաստարանը գետնի մեջ։

Տանկը վոչնչացնելու համար հարկավոր և ծակել նրա զրահը (նկար 17), իսկ դրա համար արկը պետք է ուղիղ հարվածի զրահը (նկար 21) (ուղիղ անկյան տակ), վորովհետև շեղ հարվածի գեղքում (սուր անկյան տակ) արկը կարող է սահել զրահի յերեսից (բնուգոստում)։ Տանկն ունի փոքր բարձրություն (մոտ 2 մետր) և չափազանց արագ և շարժվում։ Այդ պատճառով շարժվող տանկը հաջողությամբ հարվածելու համար հարկավոր է, վոր արկը թռչի գետնամերձ հետագծով, այսինքն՝ գետնի յերեսից գած և վորքան կարելի յետագ (այլ կերպ արկի թռիչքի ընթաց-

քում տանկը կհեռանա այն վայրից, վորտեղ նա յեղել եր ձիգի մոմենտին)։

Գետնի մեջ գտնվող ապաստարանն ավերելու համար նույնպես պետք է ծակել այն, ուստի նույնպես պետք է դիպցնել նրա ծածկաբանին վերկից (ուղիղ անկյան տակ)։ Բայց ավյալ գեղքում արկը պետք է գետին ընկնի վոչ թե գետնամերձ, այլ ուղղորդ հետագը-




Նկ. 21.

Ինչպես են թռչում թնդանոթի, հորիցի ու հրամանդի արկերը ծով, վորը հնարավոր և միայն դեպքում, յերբ արկը լարձրանում է բարձր գեղի վեր և այնտեղից համարյա ուղիղ ցած ընկնում գետին։ Վորովհետև այս տեղ նշանն անշարժ է, ուստի արկի թռիչքի մեջ արագություն չի պահանջվում։

Այսպիսով հրետանին պետք է ունենա տարբեր հրանոթներ, վորոնք արկերը նետում են թե գետնամերձ և թե ուղղորդ հետագծերով։ Առաջին տեսակի հրանոթները կոչվում են քննարքներ, իսկ յերկրորդ տեսակի հրանոթները՝ հոբիցներ և հրամանիցներ (մորտիրաներ) (նկար 21 և 22)։

ԹՆԴԱՆՈԹՆԵՐԸ ծառայում են բաց, կենդանի, արագ շարժվող (տանկեր, սավառնակներ, հեծելազոր) և հետագծով,

ուավոր (իսոր թիկունք) նշաններ հարվածելու համար: Քանի վոր թնդանոթները պետք ե արկերը նետեն մեծ արագությամբ և հեռուն, ուստի նրանց հարկավոր ե վառողի մեծ լիցք և ամուր, յերկար ու ծանր փող:



Ակ. 22.

Միևնույն տրամաչափի թնդանոթի, հոբեյի և հրաւանդի փողերը

ՀՈԲԵՅՑՆԵՐԸ ծառայում են հարվածելու համար ծածկված ու բաց կենդանի նշաններ և ավերելու բազմապիսի ապաստարաններ ու ամրություններ: Նրանց փողն ավելի կարճ և ու թեթև, քան թե նույն տրամաչափի թնդանոթներինը (նկար 22):

Կարենը ե նույնպես այն հանգամանքը, վոր ուղղ զորդ հետաքծի շնորհիվ հոբեյների համար ավելի հեշտ ե ծածկվել տեղանքում և միևնույն քաշի (ուստի և միևնույն զյուրաշարժության) պայմաններում նրանք ունեն անհամեմատ ավելի ծանր և հուժկու արկ, այսինքն կարող են ավելի մեծ հարվածում հասցնել:

Վերջապես իրասանդերը, վորոնք ներկայումս գործադրվում են զլխավորապես գումարտակային հրետանու մեջ, կրակում են փոքր հեռավորության վրա:

Նրանք լավ են հարվածելու համար իսորը ծածկված և մոտակա ամուր նշաններ: Նրանց փողն ավելի և կարճ ե ու թեթև, քան թե հորիցների փողը:


Հրետանական տեխնիկայի վերջին տարիների հաջողությունները հնարավորություն են ավել սաեղծելու նաև միասնական (ունիվերսալ) հրանոթ, վորը կատարում և թե թնդանոթների և թե հոբեյների խնդիրներ: Այլ հրանոթն անվանում են քննաբնորնիցից: Նման ունիվերսալ նրանոքներ, հավանաբար, կործադրվին ապագայում, բայց անկասկած կմնան նաև հատուկ հրանոթները՝ թնդանոթներն ու հոբեյները, վորովհետև ունիվերսալ հրանոթները չեն կարող հավասար չափով լավ կատարել հրետանու բոլոր բազմազան խնդիրները:

ՃՐԵՑԱՆՈՒՅԻ ՏԵՍԱԿԱՆԵՐԸ

Տարբեր են վոչ միայն նշանները, վորոնց հրետանին պետք ե հարվածի իր կրակով, այլև պայմանները, վորոնց մեջ նրան հարկավոր ե լինում գործել: Այլ բան ե, յերբ հրետանին իր կրակով պետք ե ոգնի հարձակվող վաշտին, և այլ բան ե, յերբ հրետանին պետք ե ապահովի գնդի կամ ամբողջ դիվիզիայի մարտի հաջողությունը: Առաջին գեղքում պետք են փոքրիկ ու թեթև հրանոթներ, վորոնք կարող են ամենուրեք հետևել իրենց վաշտին և տեղափոխվել ամեն տեսակ տեղանքում մարտիկների սեփական ուժով: Յերկրորդ գեղքում կպահանջվի հակառակորդի ուժեղ ամրությունների ավերում, իսկ դրա համար պետք են ավելի մեծ, համեմատաբար ավելի ծանր հրանոթներ, վորոնց տեղափոխման համար անհրա-


ժեշտ են ձիեր կամ տրակտորներ: Յերբեմն հարկավոր կլինի գործադրել նաև գերծանը հեռահար հրանոթներ յերկաթուղային պլատֆորմների (բաց վագոնների) վրա՝ սմբակոծելու համար խոր թիկունքը: Պարզ է, վոր այդպիսի ծանր հրանոթները մշտավես պետք չեն զորքերին և իզուր ծանը բեռ կլինեն նրանց համար:

Հրետանին շարունակ գործում ե զորքերի մյուս տեսակների հետ մեկտեղ, մտնելով զորական բոլոր միավորությունների (գումարտակ, գունդ, դիվիզիա, կորպուս) կազմի մեջ, վորպես նրանց անհրաժեշտ բազադրիչ մաս, ուստի հրետանու տեսակները տար-



Նկ. 23.

Մեր գնդային ձիաքարշ թնդանոթը՝ Զախ կողմում—հրանոթը. աջ կողմում—ոմբարկը



Նկ. 24.



Քնդային թնդանոթը բեռնատար ավտոյի յետելին

բերում են ըստ զորքերի այդ միավորությունների տեսակների:

Յուրաքանչյուր գումարտակ ունի իր ԳՈՒՄԱՐՏԱԿԱՅԻՆԻՆ ՀՐԵՏԱՆԻՆ: Նա հիմնականում կռվում ե հակառակորդի մեքենացված միջոցների (տանկեր, տանկետիկներ, զրահապատ տրանսպորտյորներ և այլն), նրա գնդացըրերի ու հակատանկային հրանոթների, նրա գնդանի ուժի և հետևակի ճանապարհին գտնվող բռնկնդանի խոչընդուների դեմ: Գումարտակային հրետանին ամենուրեք զնում ե իր գումարտակի յետելից, անմիջականորեն սպնելով վաշտերին ու դասակներին մոտակա մարտում:

ԳՆԴԱՅԻՆ ՀՐԵՏԱՆԻՆ ծառայում ե կռվելու համար մեքենացված մասերի դեմ և տնմիջականորեն ընդունելու համար իր յետեակին: Մեզ մոտ գնդում կառուցեն 6 հրանոթ՝ 1927թ. տիպարի գնդային 76 միլիմետրի թնդանոթներ (նկար 23—25): Այդ թնդանոթներին ունին համեմատաբար ուղղորդ հետագիծ և նոթներն ունին համեմատաբար ուղղորդ հետագիծ և

իրենց հատկություններով չափաղանց մոտ են հորից-ներին։ Գնդային թնդանոթը կրակում ե նոնակով մինչև 8 կիլոմետր հեռավորության և շրապնելով — մինչև 7 կիլոմետր հեռավորության վրա։ Նոնակն ու շրապնելը կշռում են մոտ $6^{1/2}$ կիլոդրամ, այսինքն՝




Նկ. 25.

Պնդային թնդանոթը բեռնատար ավտոյի վրա (փոխադրելի հեռանք): Վորպեսզի արագ շարժութիւն հրանոթը չխախտվի տեղից, նա ամրացվում է հատուկ աղեղներով, վորոնք յետ են ծալվում թնդանոթի բարձման համար։ Վերևում — հրանոթի բարձումն ավտոյի վրա, ներքեզում — հրանոթն ու համրանքը ալտոյի վրա

այդ արկերն ունեն բավականաչափ մեծ ուժ (շրապնելն ունի 260 գնդակ, նոնակը՝ 785 գրամ պայթուցիկ նյութ): Գնդային թնդանոթները փոխադրվում են 2 զույգ ձիերով (նկար 23), իսկ մոտորացված մասերում՝ բեռնատար ավտոների վրա (նկար 24 և 25), կամ տրանսպորտյորի հետ՝ կցանքի ձեռվ։


Դիվիջինալ չմեծանելի կովում ե այն բոլոր հիմնական նշանների գեմ, վորոնք խոչընդոտ են հանդիսանում հետևակին առաջ խաղալու կամ հաջողությամբ պաշտպանվելու (գնդացըրերի գեմ նրանց ամրացված բներում, գումարտակային հրանոթների գեմ, կենդանի ուժի գեմ խրամատներում ու ծածկարաններում և այլն): Նա կազմում է նրետանական գումանդ, վարը բաղկացած է յերկու դիվիջինից — յուրաքանչյուրում 3 մարտկոց, և մեկ դիվիջինից՝ բաղկացած 4 մարտկոցից Հնդամենը գնդում կա 10 թնդանոթային ու հորիցային մարտկոց։



Նկ. 26.

Դիվիջինական՝ 1902/1930թ. տիպարի 76 մմ, թնդանոթ

1902/1930 թ.թ. տիպարի դիվիզիական թնդանոթները (նկար 26) ունեն նույն տրամաչափն ու նույն արկերը, ինչ գնդային թնդանոթները։ 1910/1930 թ.թ. տիպարի դիվիզիական՝ 122 միլիմետրի (նկար 27) հոբիցները կրակում են՝ մոտ 23 կիլոդրամ քաշ ունեցող հուժկու արկերով (շրապնելի մեջ կա 480 գնդակ, նունակում՝ 5 կիլոդրամ պայթուցիկ նյութ) մինչև 9 կիլոմետր հեռավորության վրա։ Դիվիզիական հրետա-




Նկ. 27.

1910/1930 թ.թ. տիպարի 122 մմ. դիվիզիական հոբից

նու հրանոթները քարշակի հետ միասին կշռում են մոտ 2 տոնն և յուրաքանչյուրը փոխադրվում է 6 ձիով կամ բեռնատար մեծ ավտոմոբիլներով։ Լեռնային շրջաններում դասավորված դիվիզիաներն ու գնդերը լեռներում գործելու համար սովորական թնդանոթների փոխարեն ունեն լեռնային բնդանօրներ, վորոնք փոխադրվում են զրաստաբեռներով (նկար 28):

Յուրաքանչյուր կորպուսում, ինչպես և դիվիզիա-

յում, նույնպես կա հրետանական գունդ, բայց նա զի՞ւլած ե ել ավելի հուժկու ու հեռահար, ուստի և ավելի ծանր հրանոթներով։ ԿՈՐՊՈՒՀԱՅԻՆ ՀՐԵՏԱ-ՆԻՆ ծառայում ե կովելու համար հակառակորդի պատշաճանության խորքում գտնվող հեռավոր նշան-պատշաճանության խորքում գտնվող հակառակորդի հրետանու և ների (մասնավորապես՝ հակառակորդի հրետանու) և պատշաճանական ամուր կառուցվածքների գեմ։ Կոր-պատշաճան հրետանին ունի 1910/1930 թ.թ. տիպարի պուստային հրետանին ունի 1909/1930 թ.թ. 107 միլիմետրանոց թնդանոթներ և 1909/1930 թ.թ.




Նկ. 28.

Լեռնային հրետանին յերթում

տիպարի 152 միլիմետրանոց հոբիցներ։ Թնդանոթի արկը կշռում է 16^{1/2} կիլոդրամ, իսկ հորիցի արկը՝ 41 կիլոդրամ։ Կորպուսային հրետանու հրանոթները

Գոխադրվում են տրակտորներով (Նկար 29) կամ 8 ձիով:


Բացի զորական այս ամբողջ հրետանուց, ճակատի



Նկ. 29.

Կորպուսային թնդանոթը տրակտորի յետելց

գլխավոր տեղամասերում անհրաժեշտ դեպքերում հրետանին ուժեղացնելու կամ զորական հրետանու հրանոթների ուժերից վեր հատուկ խնդիրներ կատարելու նպատակով կա գլխավոր հրամանատարության ռեզերվի հրետանի, կամ, ինչպես կրծատ անվանում են այն, ԳՀԾՀ (ԱՐԴԿ): ԳՀԾՀ հատուկ գնդերն ունեն զորա-



Նկ. 30.

Գլխավոր հրամանատարության ռեզերվի հրետանու հուժկու հետանոթը տրակտորի յետերից չքանոթը գանվում ե թրթուրած հաստոցի վրա

կան հրետանու գանազան հրանոթներ և, բացի դրանից, առանձնապես հուժկու թնդանոթներ ու հոբիցներ (Նկար 30):

Վերջապես՝ ողացին թշնամու (սավառնակներ, դիրիժարներ) գեմ հատկապես կովելու համար զորքերն ու հակոդային պաշտպանության հատուկ զորամասերն ունեն զինիքային հրետանի՝ գլխավորապես միջին տրամաչափի 76 միլիմետրանոց թնդանոթներ, զորոնք կցված են տրակտորներին կամ ամռուր հաստատված մշտական տեղում:

Զենիթային թնդանոթները տարրերվում են նրանով, վոր զարող են կրակել համարյա ուղղահայաց գեպի վեր (զենիթին): Նրանք շատ դյուրակարձ են և արագածիք:

Յածը թռչող սպառնակների՝ շտուրմավիկների գեմ կովելու համար գործադրում են մանր տրամչափի կինիքային հրետանի (20—47 միլիմետրանոց ավտոմատիկ թնդանոթներ), իսկ չափազանց բարձր թռչող սպառնակների գեմ կան յուշը տրամչափի (100—127 միլիմետրանոց) զենիթային թնդանոթներ:

Կան նույնպես վերերկրյա—զենիթային ունիվերսալ հրանոթների նախագծեր, վորոնք կարող են միաժամանակ կատարել և՛ հակատանկային, և՛ հակոդային պաշտպանության խնդիրներ (Նկար 31):

Ողացին թշնամու գեմ կարող են կովել նաև դիրիժաների սովորական թնդանոթները: Դրա համար այդ թնդանոթները հաստում են հատուկ հաստոցների վրա, վոր շարունակ իրենց հետ կրում են դիվիզիոնալին հրետանական գնդերի մի քանի մարտկոցներ:



Նկ. 31.

Վերերկրյա—զենիթային ունիվերսալ թնդանոթներ։ Նկարում մցույց է տրված մի զեպք, յերբ մարմարոցի յերեք հրանոթները կրակ են վարում սավառնակների գեմ, իսկ 1 հրանոթը՝ տանկերի գեմ

Հ Ա Ր Ց Ե Ր

1. Ինչպիսի՞ հետագիծ պետք է ունենա հրանոթը, վորպեսպի կարողանա հաջողությամբ հարփածել տանկերը։

2. Հրանոթներից վճրը կարող է ավելի թեթև և դյուրաշարժ լինել—75 միլիմետրանոց թնդանոթը, թե՛ 75 միլիմետրանոց հորեցը։ Այդ հրանոթներից վճրն ունի ավելի ահծ հեռահարություն։

3. Ինչպիսի՞ հրանոթ է պետք հարփածելու համար խոր ձորում ծածկված հետեակին։ Ինչնու զրա համար չի կարող պետք չալ թնդանոթը։

4. Ինչպիսի՞ հրանոթներն են կոչվում թնդանոթ—հորիցներ։

5. Քանի՞ հատ և ինչպիսի՞ հրանոթներ ունի յուրաքանչյուր հրածիդ գունդ։

6. Ի՞նչ արկերով և ինչպիսի՞ հեռավորությամբ է բակում մեր գնդային թնդանոթը։

7. Քանի՞ մալուկոց կա զիվիզիական հրետանու գնդում։
8. Ինչնու յե հարկավոր կորպուսային հրետանին։
9. Ի՞նչ և ԳՀՄՇ։
10. Ինչպիսի՞ հրետանին է կոչվում զենիթային։

ՀՐԵՏԱՆԱԿԱՆ ՀՐԱՆՈԹՆԵՐ

ԻԵԶ Ե պահանջվում իրենանական իրանորից

Վորպեսզի արկը հարվածի նշանը, հարկավոր ե այն նետել մինչև նշանը, վորը կարող ե գտնվել շատ նեռու և նետել խիստ հաշվով՝ դիպուկ։ Որինակ շրապնելը կամ նեռակայության նունակն ամենակն չեն հարվածի նշանը, յեթե նրանք պայթեն նշանի վերևում շատ բարձր։ Նույնը կստացվի, յեթե այդ արկերը պայթեն վոչ թե նշանի առջևում, այլ նրանից մի կողմի վրա կամ նրա յետեւում։ Նոնակը կավերի նշանը միայն այն ժամանակ, յերբ նա կդիմչի նշանին կամ մինչև անգամ կծակի այն, վոր միայն հնարավոր և նշանին վորոշ ուղղությամբ բաղխվելիս, վորպեսզի ընդուսում չստացվի։

Սուաջին արկով շատ սակավ դեպքում կարելի յեղիպցնել նշանին, բայց անգամ յերբ արկը դիպչում ե նշանին, վերջինս հաճախ չի հարվածվի (որինակ՝ մարդիկ, յերբ դտնվում են ամուր ապաստարանում)։ Աման դեպքերում յերբեմն հարկավոր ե լինում մեկ նշանին արձակել բավական մեծ թվով արկեր։ Դրա հետ միասին չափազանց կարեոր ե, վոր նշանը չկարողանա թագնվել, իսկ հակառակորդը ժամանակ չունենա պատրաստվելու կրակային հարձակումը յետ մղելու համար։ Դրա համար անհրաժեշտ ե, վոր հրետանին կարողանա հանկարծակի և արագ արկեր տե-

ղալ նախատեսված նշանի վրա, այսինքն՝ անհրաժեշտ ե, վոր հրետանին լինի արագածիվ։

Այս բոլորը միասին վերցրած հրետանուց պահանջում են մեծ ուժգնություն, այսինքն՝ մեծ հեռահարություն, զիսուլկություն և արագածզություն։

Բայց հրետանին զործում ե վոչ թե մեսակ, այլ հետեւակի, հեծելազորի, մոտոմիխմաների հետ միասին, վորոնք մարտում շարունակ տեղափոխվում են։ Պարզ ե, վոր հրետանին զորքերի մյուս տեսակների լավ ողնականը կարող է լինել միայն այն դեպքում, յերբ նա յետ չի մնա նրանցից, այլ ամենուրեք կհետեւակի նրանց։ Իսկ դրա համար հրետանին պետք ե ունենա մեծ դյուրաշարժություն և բավականաչափ անցանելիություն, այսինքն՝ արագ շարժվելու, վատ ձանապարհներով կամ մինչև անգամ առանց ձանապարհների անցնելու ունակություն, հաղթահարելով զանազան խոչընդուներ։

Այս բոլոր պահաջներն, ինարկե, անդրադարձել են այն մեքենայի կառուցման վրա, վորը նետում է հրետանական արկեր։

ԻՆՉՈՒ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՄԱՐՏԻԿ ՊԵՏՔ Ե ԳԻՏԵՆԱՀՐԱՄԱԿ ԿԱՌԱՋՈՒԹՅՈՒՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Յուրաքանչյուր մարտիկ պետք ե ամենից առաջ զիտենա իր զենքը։ Բայց այդ դեռ քիչ ե։ Մարտում հաճախ հետեւակ մարտիկն ել հարկավոր ե լինում կրակել հրանոթից կամ փշացնել այն, վորպեսի հրանոթը ընկնի թշնամու ձեռքը և թշնամին այդ զի հրանոթը չուզզի մեր դեմ։


